Արձանագրություն 2

**ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.06.2024թ. ժամը 12:00-ին:

***Հանձնաժողովի նախագահ***

**Վ. Պողոսյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/.

***Հանձնաժողովի անդամներ***

**Ա. Մարտիրոսյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.

**Ա. Ղազարյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական:

***Գնումները համակարգող***

**Լ.Սահակյան՝** ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի ավագ մասնագետ

**Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հակադարձ աճուրդի օրը՝ հունիսի 18-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

1. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|
| «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ | ՀՎՀՀ 01068008 , հասցե՝ ք. Երևան, Մոլդովական 50/4, էլ հասցե՝ footmafor@gmail.com, Հեռ. 077666566 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

2. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

1. «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

-«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը ստորագրված չէ էլ. թվային ստորագրությամբ,

-«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ապրանքի ամբողջական նկարագիրը:

-«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է տվյալ գնման ընթացակարգի նախահաշվային գինը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:*

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկած գները ներկայացվում են ստորև.

| Չ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ | | | | | | | | |
| | | Արժեք (ՀՀ դրամ) | | | | ԱԱՀ (%) | Ընդհանուր գին (ՀՀ դրամ) | | | |
| | | Նախնական առաջարկ | | Վերջին առաջարկ | | | Նախնական առաջարկ | | Վերջին առաջարկ | |
| 1 | Ազդանշանային համակարգեր /նախահաշվային գինը կազմում է 1,500,000 ՀՀ դրամ/ | 550,000,000 | 550,000,000 | 660,000,000 | 660,000,000 | 20 % | 550,000,000 | 550,000,000 | 660,000,000 | 660,000,000 |

4. Հանժնաժողովի կայացրած որոշումները.

**Հանձնաժողովը որոշեց.**

*1.* «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ընթացակարգը հայտարարել չկայացած:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

**Գնահատող հանձնաժողովի Նախագահ** ______________ **Վ. Պողոսյան**

**Գնահատող հանձնաժողովի անդամներ՝** ______________ **Ա..Մարտիրոսյան**
______________ **Ա. Ղազարյան**

**Գնումները համակարգող՝** ______________ **Լ.Սահակյան**